


սառը չեն մնալ, եթէ որ նրանք սերտ կերպով ժամենան միմեանց: Այդ կերպ վարուելով, թէպէտ և ամենքը հե-
րասներ չեն դառնալ, սակայն, անկասկած ամենքն էլ
կարող են սիրով ջերմանալ:

Այդ միջոցին ներս մտան մի խումբ նոր «հիւրեր»,
քոյր Վարվառէն վերջ տուեց խօսակցութեանն՝ ասելով.

— Ներեցէք, սիրելիս, ստիպուած եմ՝ վերջացնելու
մեր խօսակցութիւնը, բայց ձեր գործն ինձ շատ հե-
տաքրքրում է: Թոյլ տուէք, որ ես ինքս մի երեկոյ ձեզ
ժամ գամ՝ այդ մասին խօսելու. իսկ առ այժմ՝ ցտե-
սութիւն:

Ռուս. թարգմ. Մամբրէ՝ վարդապետ.

(Նարուհակելի)



ԵՐ ԿԱՐ ՃԱՆԱՊԱՐԷ

Մենակ գնում եմ երկար ճանապարհ՝
Արտերի միջով կանաչ ու սիրուն,
Ինձ ժպտում է հեզ երկինքը պայծառ,
Եւ ծաղկեպսակ գեղեցիկ գարունն:

Ու մացառների թաւ ոստերի մէջ՝
Արտոյան է երգում քաղցր դայլայլով,
Ու կանաչ, ծաղկած սէզ ավերի մէջ
Առուն է ժպտում երկնացու փայլով:

Երգիր, արտուտիկ, իմ ազատ թռչնիկ,
Երգել քեզ արժէ, անհոգ անվհեր,
Քանի քո երգիչ ու սիրող սրտիկ՝
Քեզնից զատ չունի ոչ իշխան, ոչ տէր:

Քանի կենսուրախ և զուարթ ընտրութիւնն
Հպում է մեղմիկ սրտիդ լարերին,

Ու ծովածածան արտը կանաչած
Քեզ ձայնակցում է ուրախ, ցնծագին:

Քանի քո սրտում գարունն ու երկինք
Անդրացուում են իրենց վառ շքով,
Ապա այն տեղից իբրև դայլայլիկ
Կրկին հնչում են լի հիացմունքով:

Իսկ մենք, ճ, վայ մեզ, չար մտքով լեցուած՝
Սովորել ենք միմեանց որոգայթ լարել,
Անխիղճ, անզգայ և պատուով բնկած՝
Լուր գիտենք արիւն թափել ու ծծել:

Ու մեր վեհ կոչման բարձունքից խաղտուած
Յած ենք գլորուում դէպի խոր անդունդն
Մեր առաջ սարսափ, արիւն ու չարիք
Սփռում, գնում ենք ի զուր անօգուտ:

Եւ աչք դարձրած գարնան գեղ ժպտից
Մենք աչք ենք ուղղել դէպի արեան դաշտ,
Ուր անմիտ կերպով, սրտով թունալից
Միմեանց են ջարդում կատղած ու անհաշտ:

Երգիր, արտուտիկ, իմ ազատ թռչնիկ,
Քեզ համար արժէ երգել ցնծագին,
Քանի սրտիկդ չունի փոթորիկ,
Գարունն երգելու վարժ է քո հոգին:

1905 թ. Մայիսի 29-ին Կոչ:

